ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 63

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Շենավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Ապարան համայնքի (Շենավան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Շենավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Շենավան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-082-0237-0006 կադաստրային ծածկագրով 0.67538 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 02-082-0237-0006 կադաստրային ծածկագրով 0.67538 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2024 թվականի նոյեմբերի 26-ի N ԴԽ/14.1/38297-2024 գրությամբ ներկայացված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության պահանջներն ապահովելու պայմանը (կցվում է):

4. Ապարան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Շենավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Շենավան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | Լ.Առաքելյան |

Երևան, «19» «փետրվարի» 2025 թ.